Էրիխ Ռասպե Բարոն Մյունխհաուզենի արկածները (հատված)

Ուշադի՛ր կարդա և կատարի՛ր առաջադրանքները:

Կողմնացույց չլինելու պատճառով մենք երկար ժամանակ թափառում էինք անծանոթ ծովերում:

Մեր նավն անընդհատ շրջապատում էին շնածկներ, կետեր և ուրիշ ծովային հսկաներ:
Վերջապես դեմ առանք այնպիսի մի ձկան, որն այնքան մեծ էր, այնքան մեծ, որ գլխի մոտ կանգնած, պոչը տեսնել չէինք կարողանում:

Երբ այդ ձուկն ուզեց ջուր խմել, բերանը բաց արեց, և ջուրը գետի նման նրա կոկորդը հոսեց՝ իր հետևից քաշ տալով մեր նավը: Կարող եք պատկերացնել, թե մեր մեջ ինչ իրարանցում ընկավ: Մինչև անգամ ես, որ այնքան քաջ եմ, էլի վախից դողդողացի:

Բայց ձկան փորի մեջ նավահանգստի պես խաղաղ էր: Ձկան փորը լիքն էր նավերով, որ ագահ կենդանին վաղուց էր կուլ տվել: Օ՜, եթե դուք գիտենայիք, թե ինչպիսի խավար էր այնտեղ: Ձէ՞ որ մենք չէինք տեսնում ո՛չ արև, ո՛չ աստղեր, ո՛չ լուսին: Ձուկն օրական երկու անգամ էր ջուր խմում, և ամեն անգամ, երբ ջուրը նրա կոկորդն էր հոսում, մեր նավը բարձրանում էր հսկա ալիքների վրա: Մնացած ժամանակ ձկան փորի մեջ չոր էր:

Երբ որ ջուրը ցամաքեց, ես ու նավապետն իջանք զբոսանքի: Այստեղ մենք հանդիպեցինք ողջ աշխարհի ծովայինների՝ շվեդացիների, անգլիացիների, պորտուգալացիների: Նրանց թիվը ձկան փորի մեջ տասը հազարի էր հասնում: Նրանցից շատերն արդեն մի քանի տարի ապրում էին ձկան փորում: Ես նրանց առաջարկեցի հավաքվել ու քննության առնել այս տոթ բանտից ազատվելու ծրագիրը:

Ինձ նախագահ ընտրեցին, բայց հենց այն րոպեին, երբ ես ժողովը բաց արի, անիծված ձուկն սկսեց նորից ջուր խմել, և մենք մեր նավերը փախանք:

Մյուս օրը կրկին հավաքվեցինք, և ես հետևյալ առաջարկն արի. երկու ամենաբարձր կայմերը իրար կապենք և հենց որ ձուկը բերանը բաց անի, դեմ տանք ծնոտներին: Այն ժամանակ ձկան բերանը բաց կմնա, և մենք հեշտությամբ դուրս կգանք:

Առաջարկությունս անցավ միաձայն:

Երկու հարյուր ամրակազմ նավաստիներ կայմերը դեմ տվին ձկան ծնոտներին, և նա այլևս բերանը փակել չկարողացավ: Նավերն ուրախ-ուրախ ձկան փորից դուրս լողացին:

Պարզվեց, որ այդ հսկայի փորում յոթանասունհինգ նավ է եղել, կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ ահագին մարմին ուներ:

Կայմերն, իհարկե, թողնք ձկան բերանում, որ նա այլևս ոչ ոքի կուլ տալ չկարողանա:

Մենք դեպի ափն ուղղվեցինք, և ես շտապեցի ցամաք դուրս գալ, հայտնելով ուղեկիցներիս, որ այլևս ոչ մի ժամանակ և ոչ մի տեղ չեմ գնա, որ բավական են այն նեղությունները, որ կրեցի, իսկ այժմ հանգստանալ եմ ուզում:

Իմ արկածները շատ հոգնեցրել էին ինձ, և որոշեցի հանգիստ կյանք վարել:

Տեքստային առաջադրանքներ

1. Ինչո՞ւ նավը հայտնվեց ձկան փորի մեջ, գունավորի՛ր ճիշտ պատասխանը:
   1 միավոր

ա) Նավաստիները չէին նկատել ձկանը:

բ) Ձուկը սոված էր և կուլ տվեց նավը:

գ) Ձուկը ջուր խմեց, ջրի հետ նավն էլ հայտնվեց փորի մեջ:

դ) Պատճառը ճշված չէ:

2 . Ի՞նչ առաջարկ արեց հեղինակը ձկան փորում վաղուց գտնվողներին, որ կարողանան դուրս գալ ձկան փորից:
1 միավոր

Երկու կայմեր իրար կապեն և հենց ձուկը ուզեր ջուր խմեր կայմերը առաջ տան և գնան:

3. Նավաստիներն ինչո՞ւ կայմերը թողեցին ձկան բերանում: 1 միավոր

Որ նա ուրիշներին կուլ չկարողանա տա:

4. Տեքստից դո՛ւրս գրիր մեկ պատմողական նախադասություն և դարձրո՛ւ հարցական: 1 միավոր

Պարզվեց, որ այդ հսկայի փորում յոթանասունհինգ նավ է եղել?

5. Բառե՛ր ավելացրու տրված նախադասությանը: 1 միավոր

Ձուկը բացեց բերանը: և մառդիք փախան:

Բառային առաջադրանքներ

1. Տրված բայերը դարձրո՛ւ գոյականներ: 1 միավոր

լողալ–լող

հանգստանալ–հանգիստ

խաղալ–խաղ

զբուցել–զրույց

2. Տեքստից դո՛ւրս գրիր թվականները: 1 միավոր

Երկու հարյուր, յոթանասունհինգ

3. Գոյականներից առաջ գրի՛ր՝ ինչպիսի հարցին պատասխանող բառեր: 1 միավոր

խելացի ձուկ

մեծ նավ

ուրախ ճանապարհորդ

կապույտ ծով

4. Գրի՛ր տեքստում դեղինով ընդգծված բառերի հոմանիշները: 1 միավոր

այժմ-հիմա

բաջ-դուղով

հսկա-բոյով

նորից-ելի

5. Գրի՛ր տեքստում կանաչով ընդգծված բառերի հականիշները: 1 միավոր

հանգիստ-աշխուժ

դուրս-մերս

չոր-փափուկ

խաղաղ-անհանգիստ